

## ԱՐՄԱՏՆԵՐԻ ԿԱՆՉԸ

«Սերունդները հաջորդում են իրար՝ նախորդներից վերցնում, հարստացնում, նորացնում ու փոխանցում, և այս բնականոն ընթացքի մեջ շարունակական են մնում ավանդույթներն ու ազգային արժեքները, որոնց հենքի վրա շար դյուրին է ժամանակի պահանջների թելադրանք՝ նորի մուտքը: Ինչ անուն էլ փանք այդ նորին, ինչքան էլ ազար պահենք նրա մուտքը մեր հոգևոր աշխարհ և մեր կենցաղ, այն, կարծում ենք, պիտի որ դժվար փեղավորվի, եթե կտրված է հենքից, եթե կտրված է արմատներից: Ի վերջո, դա բնության օրինաչափությունն է՝ ընձյուղը չի գոյարևի առանց ամուր արմարի»:

Իմ այս մտորումները արմատներով Կարինցի, ծնունդով Ախալցխեցի Գագիկ Գինոսյանի հետ կիսելու ժամանակ շար ունեի. մեր մեքենան Կարինի ճանապարհն էր բռնել, և մեր զրույցի թեման աստիճանաբար պիտի «գար-հասներ» մեր երկուսի պատենական քաղաքին:

Գագիկն իր հետ բերել էր «Կարին» ավանդական երգի պարի համույթի իր փարազը, համույթ, որի գեղարվեստական ղեկավարն է ինքը և Կարնո պարերի վերածննդի, դրանց կարարման, փարածման և ուսուցման համար արժանացել է միջազգային դափնեկրի կոչման: Ահա այս իրավունքով է նա բարձրաձայնում իր մրահոգությունները, որոնց ոչ միայն լսել, հավարալ է պետք, այլև դրանց մասին խորհել ու հետևություններ անել: Անհանգստությունն է, մրավախությունն, փազնա՛պ, որ Գագիկ Գինոսյանն ինքն իր մեջ ունի հայկական ազգային պարի կորստի հանդեպ:



...Մենք նստած էինք Կարնո բերդի ամենավերին եզրաքարերին, որպեղից ամբողջ Կարինն է երևում: Նաշվում էինք գմբեթավոր եկեղեցիները: Դրանք յոթն էին՝ յոթ գմբեթ, յոթ եկեղեցի: Խաչերը չկային, բայց եկեղեցիները կային: Մեկը այգու մեջ էր: Քիչ առաջ էինք այնպեղից եկել: Դիմային պարի շարվածքը լրիվ փոխած էր. վերաշարել էին շար անփույթ. նրանց ընդամենը պետք էր եղել հանել մի քանի որմնաքար-արձանագրություն՝ փեղը դնելով կիսահունական, կիսաարաբական ինչ-որ բան:

Երբ ամրոց փանող նեղլիկ ու ծուռուծուռ փողոցով բարձրանում էինք վեր, երկկողմ հայկական լքված փներում Գագիկն անհուսորեն հայ մարդ էր փնտրում: Փնտրությունի հիմնական առիթը Կարնո պարերն էին. մի նոր պար սովորեր, մի նոր պարի մասին խոսեր, որով հավելեր իր անսամբլի պարացանկը: Այդ ցանկում եղած պարերը նա հավաքել է՝ զրուցելով Կարինից գաղթածների հետ, գրառելով, նկարելով նրանց ցուցադրած պարերը Ախալցխայում, Ախալքալաքիում, Նինոծմինդայում և բոլոր այն վայրերում, ուր Կարնո արմատներ ունեցող մարդիկ կան:

– Ես վախենում եմ, շար եմ վախենում, որ վաղը պարը «գրաբար» դառնա:

Գրաբարը ակունքն է մեր ոսկեղնիկ լեզվի, բայց այսօր աստիճանաբար դժվար հասանելի է սերունդներին, ազգային պարը, որ ծեսերի, ավանդույթների, կեցության ու գոյարևման կերպն է, իմա՝ կենսագրության բաղադրիչներից մեկը, հեռացող մաս դառնալով՝ դեպի հիշողություն է գնում: Ահա Գագիկի արդարացված մրավախությունը:

– Եթե մարդն իր արմատներից կտրվել է, ուրեմն նա իր փեսակն է փոխել:

Նանդիմանողի իրավունքը վաստակով եկած իրավունք է: Նայրենիքի մասին խոսող Գագիկը «Արծիվ մահապարտ» հուշամեդալի ասպետ է: Նրա՝ մահապարտի անցած ճանապարհի մասին խոսելը առանձին թեմա է, իսկ Կարնո բերդի վրա մեր ունեցած գրույցը գույր պարի՝ Կարնո պարի մասին էր:

– Վերագարթնած պարերից շատ նկատելին քո «գրած» ու վերականգնած «Կարնո քոչարին» է, որը ձեր համերգներում առանձնակի ընդունելության է արժանանում և խնդրվում կրկնել:

– «Կարնո քոչարին» շատ կրակոտ և յուրահատուկ պար է: Դա մեր խմբի այցեքարտն է. այլ խմբեր այն չեն պարում:

– Երիտասարդներից ոմանք հրապուրվում են օտարազգի պարերով:

– Մենք իրավունք չունենք մարդկանց արգելել դա, բայց պարտավոր ենք նրանց ցույց տալ, թե ինչ ունենք, որը պատկանական է, որը մեր կորուսյալ երկրի հիշողությունն է, և եթե դա մոռանանք, ուրեմն այդ երկիրն ու մեր ապուպապերին ենք մոռանում: Երբ սա չենք անում, դատարկ տեղ է մնում, և օտարազգի պարերն արմատավորվում են մեր սովորությունների մեջ: Այ սա արդեն մշակութային ինֆերվենցիայի նման բան է: Դա մոլախոտ աճեցնել է նշանակում: Երեխան էլ այդ մոլախոտի միջավայրում մեծանում, յուրացնում է, հետո շատ դժվար կլինի նրան ազգային մշակույթ վերադարձնելը:

– «Նայկական ավանդական պար»- սա ի՞նչ խորհուրդ ունի իր մեջ:

– Նայ իրականության մեջ ծիսակարգից դուրս ոչ մի պար գոյություն չունի: Նայն իր պարը միշտ տեսել է որոշակի ծիսակարգի մեջ: Պարն առաջին հերթին սոցիալական ուժ է, մի երևույթ, որն ազդել է մարդու ենթագիտակցականի վրա: Նայկական պարերում այնքան խորքային, իմաստային բացատրություն կա:

...Մեր խումբը, որ ամբողջ եկեղեցում էր, դուրս եկավ, և մենք նեղվեցինք, որ հիմա էլի սկսվելու է շատ սեղմ ժամկետներ ունեցող մեր գրաֆիկային երթուղու վազքը: Քիչ, շատ քիչ է այս հայրենակարոտ վայրերում լինելու մեր «լիմիտը», և շատ բան տեսնելու ցանկությունը ոչ մի կերպ չի տեղավորվում այդ ժամկետների մեջ:

Ամբողջ բարձունքից մեկ անգամ էլ հայացք գցեցինք Էրզրումի համայնապատկերին: Գագիկը ոնց որ թե չէր պատրաստվում հեռանալ բերդից. ուզում էր երկա՞ր մնալ տպավորված այդ տեսարանից, ուզում էր երևակայորեն Ախալցխա գաղթածների հին ու հալումաշ եղած քնե՞րը հայացքով որոնել-գտնել... Նա սկսեց երգել: Նախ ցածրաձայն, երբ նստած էր, ապա ելավ, հասակով մեկ կանգնեց պարսպի պարիին ու բարձր, շատ բարձր շարունակեց երգել: Դա Զիվանու «Կարնեցու երգը» գործն էր, որ մեզանում շատ քիչ է կատարվում՝ Լևոն Իսախրյան, Աննա Նովիաննիսյան: Ես այստեղ ուզում եմ ութ փուն ունեցող այդ բանաստեղծության երգվող երեք փունը մեջբերել՝ ցանկությամբ, որ ընթերցողս թե կուզենա Կարին այցելել, անպայման փորձի սովորել այդ երգը:

«Տինգ փարի է, որ չեմ տեսել երեսդ,

Իմ եղել է հալս յաման, Արգյուրում,

Մե աշխարքս կաժե մե անգամ տեսդ,

Նողիդ, ջրիդ-ըլլիմ դուրբան, Արգյուրում:

Նըճըպ վառ կտեսնեմ ես քու ճրագըդ,

Ես քու լավդ կուզեմ-ըլլալով ձագդ.

Ատին անդին չեին քոչեր փղաքըդ,

Թե ջլեիր դու Տաճկաստան, Արգյուրում:

...Տին քաղաք ես, բնականեն անահ ես,

Նիջիդ մասխուլովը էլին կշահես,

Նորս, պապիս ոսկորները կպահես,

Ինձ ալ էլիր դու գերեզման, Արգյուրում»:

– Այս թե հիմա խումբս այսպեղ լիներ, այս բերդի վրա մի պար պարեինք:

– Մյուս այցելությանը խմբով կգաք ու կպարեք:

Միսիթարու՛մ էի, թե՛ դա պարզապես իմ ցանկությունն էր, չգիտեմ, բայց պարկերացնում եմ այդ տեսարանը՝ բերդի հարթակում, եկեղեցու հարևանությամբ գիլ փչող գունայի ձայն, և՛ «Կարնո քոչարի»-ն: Նրաչք տեսարան կլիներ:

...Մենք լուռ իջանք բերդից՝ երկուսով էլ վիրպուսալ այդ տեսարանը յուրովի պարկերացնելով:

*Շարունակելի*